



ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԸԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՈՎՅԻՆ
ՆԱԽԱՆԱՐԱՆ

**Մեր Համալսարանը
հնի և նորի համալիր
գաղափարակիրն է**

ՄԵԾ ՈՒ ՓՈՔՐ ԵՐԱԶԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Հիշո՞ւմ եք՝ փոքր տարիքում ինչ հաճախ էինք նեղանում ծնողներից՝ մեր այս կամ այն պահանջը չբավարարելու կամ մեր ուզած նվերը չստանալու համար: Բայց կար մեկը, ումից երբեք դժգոհ չէինք, նույնիսկ այն դեպքում, երբ մեր ցանկությունը չէր կատարում: Նրա համար միշտ արդարացում կար՝ Լապլանդիան շա՛տ հեռու է, ճանապարհները ծյունոտ են, այս տարի այդքան շատ փող չունի և այլն: Ձմեռ պապուց նեղանալ չէր կարելի, դե, ինչպես նեղանայինք մեկից, ում երբեք չէինք տեսնում:

Եվ, հենց այդ խորհրդավորության քողի հետևում էր թաքնված մեր այդքան ամուր հավատը: Նոր տարին հենց Ձմեռ պապն էր, որ կար: Ուրիշ ի՞նչ, հա՛, նաև ընկույզ ու մանդարին, բայց դա ավելի հին պատմություն է: Իմ հերոսների Նոր տարին արդեն մանդարիններով չէր գալիս: Պատկերացումներն անսպառ էին, ցանկությունները՝ շատ:



Մեր համալսարանի ուսանողները հավատում էին, իհարկե, Ձմեռ պապուն, բայց վերապահորեն: Օրինակ՝ մասնագիտությամբ շինարար Յուլիենն խոստովանում է, որ 5-6 տարեկանում, անցնող բոլոր ուստիկաններից հերթով ճշտում էր՝ կա՞ Ձմեռ պապ, թե՞ ոչ:

Այս ճշմարտության բացահայտման շուրջ կարծիքները հակասական են: Հոգեբանները պնդում են, որ Ձմեռ պապու մասին հորինվածքը կասկածի տակ է դնում ծնողի անկեղծ ու ճշտախոս լինելու հանգամանքը: Բացահայտելով, որ Ձմեռ պապ իրականում չկա, երեխան հասկանում է, որ իրեն տարիներ շարունակ խաբել են: Բայց, մյուս կողմից, Ձմեռ պապն այն առաջին ու կարևոր կերպարն է, որը ստիպում է երեխային հավատալ հրաշքների:

Մեր ուսանողուհի-դիզայներ էլեոնորան Ձմեռ պապու հորինվածքը բացահայտել է բավականին վաղ տարիքում: Ասում է՝ 2 տարեկան էի, երբ Ամանորի գիշերը դռան դիմաց տեսա իմ երազած Բարբի տիկնիկն՝ իր տնով, բայց նախորդող և հաջորդող բոլոր օրերին դռնից և պատուհանից անցնողներին հետևելով հասկացա, որ Նա չկա:

Բայց այս պատմության մեջ կարևոր դա չէ, այլ այն, որ նույնիսկ այդքան փոքր հասակում զգացել է՝ անկախ ամեն ինչից, Ձմեռ պապուն նամակ գրելը պարտադիր է: Ո՞վ է բերում նվերը և որտե՞ղից, չգիտեմք, բայց հաստատ ինչ-որ մոգական ուժ Ամանորի գիշերվա երազանքներն իրականացնում է:

Ի դեպ, իրականացնում է թե՛ մեծ, թե՛ փոքր երազանքները: Ապագա գրոսավար Լուսինեն 6 տարեկանում ունեցավ իր երազած հեծանիվը, ինժեներ Սպարտակը՝ լեզո-կոնստրուկտորը, ճարտարագետ-ինժեներ Խաչատուրը՝ իր գնացքը: Տարիներ անց սիրով ու հավատով պահված երազանքներն էլ իրականացան՝ ընդունվեցին համալսարան:

Երազանքներ այսօր էլ ունեն, ավելի ճիշտ՝ նպատակներ: Հիմա էլ ուզում են քննությունները լավ հանձնել, սիրելի բուհը կարմիր դիպլոմով ավարտել, ունենալ լավ պաշտոն՝ բոլոր ընկերներին օգնելու համար, մի քիչ էլ անձնական, օրինակ՝ մեքենա, սեփական բիզնես...

Ես էլ եմ հավատում, թեպետ վաղուց նամակ չեմ գրում: Աղջիկս է գրում, ես չեմ կիսում հոգեբանների կարծիքը և ուզում եմ, որ հրաշքների երկար հավատա: Հրաշքը Ձմեռ պապը չէ, այլ՝ հավատը:

Բարո՞վ գաս, Նոր տարի: Իրական հրաշքներով, աներեր հավատով և առողջությամբ գաս:

Դիանա Պողոսյան

ՈՐԱԿՅԱԼ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՄԱՆՈՐՅԱ ՆՎԵՐՆԵՐ

Ինտելեկտուալ խաղի պատասխաններն ուրիշ որտե՞ղ կարող են գտնել իրենց անսխալ պատասխանները, եթե ոչ՝ համալսարանում:

ՃՇՀԱՀ-ի Որակի ապահովման կենտրոնն ամանորյա անակնկալ էր պատրաստել մեր համալսարանի աշխատակիցների համար: «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղի ձևաչափով հարցեր, նվերներ, բարեմաղթանքներ... մի խոսքով իսկական նախատոնական եռուզեռ:

Ռեկտոր Գագիկ Գալստյանի գլխավորությամբ՝ բոլոր ներկաները պատասխանեցին իրենց հարցերին, ստացան խորհրդանշական նվերները և գրեցին բարեմաղթանքներ՝ թղթե տոնածառի ձյուղերին:



Անակնկալը ստացված էր, տոնական տրամադրությունն՝ ապահովված: Համալսարանականները միմյանց առողջություն ու հաջողություն մաղթեցին, միշտ միասին և անպակաս թիմով աշխատելու ցանկություն հայտնեցին:

ԴԻՊԼՈՄԱՆՈՒՄ ՕՐԻ ԴԻՋԱՅՆԻ ԱՄԲԻՈՆՈՒՄ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Դիզայնի ամբիոնում տարեվերջյան «Բերքահավաք» էր: Ամփոփում էին անցնող տարվա ձեռքբերումները, մրցանակներն ու պարգևները:

Դիզայնի ամբիոնի վարիչ Աշոտ Բաղդասարյանի, Դիզայնի ֆակուլտետի դեկան Արմեն Բուբուշյանի, դասախոսների և ուսանողների ներկայությամբ՝ նախ, հանձնվեցին Մոսկվայում կայացած «Заводной апельсин» ուսանողական, միջազգային մրցույթի հաղթողների մրցանակները: Հայաստանի, Բելառուսի և Ուկրաինայի շուրջ 30 համալսարանից ներկայացված 225 աշխատանքներից 2-ը՝ մեր համալսարանից, արժանացել են պարգևների: Բրոնզե դիպլոմի և հատուկ մրցանակների է արժանացել Պողոսյան Յանան: Դիպլոմ է ստացել նաև Արաբյան Ամալյան:



Ներկայացված որակյալ աշխատանքների և ներդրած ջանքերի համար պատվո դիպլոմների են արժանացել Աշոտ Բաղդասարյանը և ամբիոնի գրաֆիկական դիզայնի սեկտորի վարիչ Թամարա Թույսուզյանը:

Հանձնվեցին նաև վերջին ցուցահանդեսներին մասնակցած ուսանողների դիպլոմները:

«ԹՈՒՐՔԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿՆՈՍՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ» ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑԻՆՔ ԹՈՒՐԲ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻՆ

Հունվարի 22-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում էին Թուրքիայի ՄԵՖ և Կադիր Հաս համալսարանների դասախոսները: Այցը կազմակերպվել էր «Հրանտ Դինք» հիմնադրամի կողմից իրականացվող «Թուրքիա-Հայաստան երկխոսության ծրագրի» շրջանակներում՝ Գյումրու Երիտասարդության նախաձեռնության

կենտրոնի հետ համագործակցությամբ և ՄԵՖ Բրիտանիայի Կառավարության հակասությունների, կայունության և անվտանգության հիմնադրամի աջակցությամբ:

ՄԵՖ համալսարանի արվեստի, դիզայնի և ճարտարապետության ֆակուլտետի դոցենտ Օզան Ավչին ներկայացրեց ՄԵՖ համալսարանի Նախագծման և կառուցապատման արվեստանոցը և դրա շրջանակում ՄԵՖ-ի ու ՃՇՀԱՀ-ի համագործակցության հնարավորությունը: Բանախոսը նշեց, որ ՄԵՖ-ի Նախագծման և կառուցապատման ստուդիայի շրջանակներում՝ առաջին տարվա ուսանողները և դասախոսները, սոցիալական նպատակներից ելնելով, կնախագծեն և կկառուցեն միասին:



Նշենք, որ այսօր նախատեսվում է նաև ՄԵՖ համալսարանի Արվեստի, դիզայնի և ճարտարապետության ֆակուլտետի դոցենտ Ամետ Սեզգինի դասախոսությունը՝ «Սինան. ճարտարապետին և նրա ժառանգությունը հասկանալու հեռանկարները» թեմայով և Կադիր Հաս համալսարանի Արվեստի և դիզայնի ֆակուլտետի դոցենտ Այշե Էրեկի դասախոսությունը՝ «Ժամանակակից արվեստ և քաղաքաշինական տարածք Թուրքիայում» թեմայով:

Հիշեցնենք՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի և Ստամբուլի ՄԵՖ համալսարանի միջև փոխադարձ այցերն ու դասախոսությունները մեկնարկել են դեռևս անցյալ տարի՝ «Հրանտ Դինք» հիմնադրամի միջնորդությամբ: Նախ՝ «Հրանտ Դինք» հիմնադրամի և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում՝ մեր համալսարանի պատվիրակության անդամները մեկնեցին Թուրքիա, այցելեցին պատմական տարածքներ, դպրոցներ, թանգարաններ, Ստամբուլի MEF համալսարան, որտեղ հանդես եկան ճարտարապետության վերաբերյալ դասախոսություններով: Այդ այցի ընթացքում էլ մեր համալսարանի ուսանողները՝ 6 թուրք ուսանողի հետ, նախագծեցին, ապա՝ իրականացրեցին Ստամբուլի Հայկական եկեղեցու հովանու ներքո գտնվող հայկական մանկապարտեզի խաղահրապարակի նախագիծը:

«ԿԱՄՈՒՐՋԻՆ» ՓԲԸ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ՎԱՐԴ ԱՍԱՏՐՅԱՆՆ ԸՆՏՐՎԵՑ ՃԵՀԱՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ



ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ԱՍԵԼԻՔԸ ՇԱՏ ԷՐ, ԱՊԱԳԱ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՀՈՒՋՄՈՒՆՔՆ՝ ԱՆՉԱՓԵԼԻ

«Ճարտարապետությունը մասնագիտություն չէ, երեխեք ջան, այլ մարդու էությունը: Պիտի սիրես այն, որ մարդիկ էլ ընդունեն քո արած գործը»: Ո՞վ կարող էր առավել պատկերավոր ներկայացնել Ճարտարապետի մասնագիտությունն ուսանողներին, եթե ոչ՝ Երևանի գլխավոր Ճարտարապետը:

Փետրվարի 14-ին մեր համալսարան հյուր էր եկել Արթուր Մեսչյանը: Ուսանողների ոգևորությունը նկարագրելն անհնար է, տեսնել էր պետք:

Գլխավոր Ճարտարապետին իր ջերմ ողջույնի խոսքն ուղղեց ռեկտոր Գագիկ Գալստյանը՝ նշելով, որ համալսարանն անչափ ուրախ է իր հարկի տակ տեսնել նախկին սանին:



Ուսանողներին հետաքրքրող հարցերը շատ էին ու բազմաբնույթ, Արթուր Մեսչյանի պատասխանները՝ սիրով ու սպառնալիք: Ապագա ճարտարապետներին, հատկապես, հուզում էին Երևանի կենտրոնի թեթևացումը, շենքերի և շինությունների արտաքին տեսքի պահպանումը, մետրոպոլիտենի նոր կայարանների և ճոպանուղու կառուցումը:

«Մենք պետք է սիրենք մեր քաղաքը, միայն երևանցու սերը կփրկի մեր քաղաքը այլանդակություններից ու անճաշակությունից», - ասաց Արթուր Մեսչյանը՝ պատմելով իր ուսանողական տարիների և անցած ուղու մասին՝ մինչև գլխավոր ճարտարապետ դառնալը. «Իմ գլխավերևում միայն Երևանի հատակագիծն է, չկա ինձ թելադրող՝ լինի դա պաշտոնյա կամ օլիգարխ»:

Հիանալով մեր ուսանողների նախագծերով՝ գլխավոր ճարտարապետը հիշեց իր հայտնի երգի խոսքերը՝ «Ահա և վերջ»՝ դրանով իսկ հորդորելով չնահանջել, չպարտվել և միահամուռ լծվել Երևանն ու մեր երկիրը կառուցելու կարևորագույն գործին:

ՏԻՐՈՋՆ ԸՆԴԱՌԱՋ. ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱԿՈՒՄ ՎԱՌԿԵՑ ՏՈՆԱԿԱՆ ԽԱՐՈՒՅԿԸ

«Երբ Հիսուս մանուկին Մարիամն ու Հովսեփը բերեցին Տաճարին ընծայելու, արևելյան դուռը գոչումով բացվեց, և Երուսաղեմի բնակչությունը մթության պատճառով ջահեր վառեց և իրենց առջև լուսավորելով՝ ընդառաջ գնացին Տիրոջը»:

Հայ առաքելական եկեղեցին ամեն տարի՝ փետրվարի 14-ին, Քրիստոսի Սուրբ ծննդից 40 օր հետո, նշում է քառասնօրյա մանուկ Հիսուսին տաճարին ընծայաբերելու տոնը՝ Տեառնընդառաջը: Տոնն ավանդաբար մեր օրեր է հասել և նշվում է բոլոր ծեսերով՝ մաքրագործող խարույկով, գաթայով, ընդեղենով, երգ ու պարով:

Տեառնընդառաջի խարույկի բարձր ճրթճրթոցով էր այսօր լցված նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հետնաբակը: Բուհերի և երիտասարդության հոգևոր պատասխանատու Գեղամ սարկավազ Ավետիսյանի գլխավորությամբ՝ խարույկի շուրջն էին համախմբվել ռեկտոր Գագիկ Գալստյանը, պրոռեկտորները, դասախոսները և ուսանողները:

«Կարևորը՝ տոնի հոգևոր կողմն ընկալելն է՝ տիրոջն ընդառաջ գնալը», - Տեառնընդառաջի խորհուրդն ու ծեսերի իմաստը մեկնելով՝ ասաց Գեղամ սարկավազը:



Ուսանողական խորհուրդը տոնին պատրաստվել էր, ինչպես հարկն է՝ կոպեկով գաթա, աղանձ, չրեր ու մրգեր և, իհարկե, համախմբող ուրախ շուրջապար: Սիրահարների օրվան՝ Սուրբ Սարգսին ընդառաջ, ուսանողները միմյանց բաժանեցին նաև աղաբլիթներ. չէ՞ որ սերը հենց ինքնին աստվածային պարզն է:

Նա կրակի շուրջ համախմբված ուսանողներին մեկնում էր Տեառնընդառաջի խորհուրդն ու ծեսերի իմաստը: Ըստ Գեղամ սարկավազի՝ խարույկն էական չէ. ավելի կարևոր են տիրոջն ընդառաջ գնալը, տոնի հոգևոր կողմն ընկալելը: Հոգևորականն ուսանողներին հորդորեց այս օրերին զբաղվել ինքնաքննությանը, փետրվարի 14-ին՝ Քրիստոսի Սուրբ ծննդից 40 օր հետո, նշում է քառասուն օրական մանուկ Հիսուսին տաճարին ընծայաբերելու տոնը՝ Տեառնընդառաջը (նշանակում է Տիրոջն ընդառաջ գնալ):

ՄԵՐ ՀԱՄԱՍԱՐԱՆՈՒՄ ԷՐ IED ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

Փետրվարի 14-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան էին ժամանել IED ինստիտուտի՝ Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչ Տամար Զազինովան և Fashion Campus դպրոցի տնօրեն Իրինա Խառատյանը:

Այցի նպատակը՝ ուսանողներին IED ինստիտուտի և ընդունվելու կարգի հետ ծանոթացնելն էր:

Տամար Զազինովան ներկայացրեց ինստիտուտում առկա մասնագիտությունները, ուսուցման կազմակերպումը, ուսանողների աշխատանքները:



ERASMUS+ INNOCENS/HERITAG ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՄԱՏԵՐ ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ ՃՇՀԱՀ-ՈՒՄ



Co-funded by the
Erasmus+ Programme
of the European Union



Ուղիղ երեք տարի առաջ՝ 2016 թվականին, հենց այս օրերին մեր համալսարանում մեկնարկեց ՀԵՐԻՏԱԳ ծրագիրը: 2016-ի վերջում էլ մեկնարկեց ԻՆՆՈՍԵՆՍ ծրագիրը. 2 տարբեր ծրագրեր, որոնք ունեն նաև շատ ընդհանրություններ:

Եթե ՀԵՐԻՏԱԳ ծրագրի նպատակն է խթանել բարձրագույն կրթության միջոցառումները ուլորտի բարեփոխումները և մշակել մագիստրոսական ու շարունակական կրթական ծրագրեր, այսինքն՝ GIS-ի կիրառման միջոցով զարգացնել մշակութային ժառանգության փաստաթղթավորումը, զբոսաշրջության կառավարումն ու ձեռներեցությունը, ապա ԻՆՆՈՍԵՆՍ ծրագիրն ուղղված է ուսանողների ինովացիոն կարողությունների և ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանը:



Սույն թվականի փետրվարի 14-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում (ՃՀՀԱՀ) տեղի ունեցավ Erasmus+ ծրագրի շրջանակներում իրականացվող INNOCENS («Ճարտարագիտական կրթության ոլորտում ինովացիոն կարողությունների և ձեռնարկատիրական հմտությունների ընդլայնում») և HERITAG («Բարձրագույն կրթության միջառարկայական բարեփոխումներ՝ զբոսաշրջության կառավարման և կիրառման երկրատեղեկատվական համակարգերի մասնագիտական ոլորտների կրթական ծրագրերում») նախագծերի համատեղ տեղեկատվական սեմինարը:

Սեմինարի նպատակն էր ներկայացնել վերոնշյալ երկու նախագծերի շրջանակներում ստացված և ակնկալվող ձեռքբերումները և արդյունքները: Սեմինարին մասնակցեցին ծրագրերի ինչպես հայաստանյան գործընկեր համալսարանների և կազմակերպությունների ներկայացուցիչները, այնպես էլ Իսպանիայի, Շվեդիայի, Իտալիայի, Ֆինլանդիայի, Հունաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Վրաստանի գործընկեր համալսարանների ներկայացուցիչները:

4 ՀԱՄԱԼՍԱՐԱՆ՝ ՄԵԿ ԳԱՂԱՓԱՐԻ ՇՈՒՋ

Հայաստանի և հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ օտարերկրացիների հետաքրքրությունը տարեցտարի ավելանում է: Դա է փաստում մեր համալսարան ժամանող պատվիրակությունների հոսքը, համատեղ աշխատանքներ իրականացնելու պատրաստակամությունը:

Փետրվարի 18-ին մեկշաբաթյա ժամկետով, մեր համալսարան են եկել Միացյալ Նահանգների Կորնելիի համալսարանի 12 ուսանող՝ մշակութաբան Լորի Խաչատուրյանի, ճարտարապետ-քաղաքաշինարար Ալեքսանդր Մելդորֆի ղեկավարությամբ և Ռուսաստանի Տյոմեն քաղաքի Ինդուստրիալ համալսարանի 4 ուսանող: Նահանգներից ժամանած մասնագետներին մեր երկիր է բերել Հայաստանում հետխորհրդային շրջանի լքված արդյունաբերական տարածքների վերակազմավորման խնդիրները, մասնավորապես, Չարենցավանի հաստոցաշինական գործարանի՝ անգործության մատնված շենքը:



Կորնելիի, Տյոմենի, ինչպես նաև ԵՊՀ-ի մշակութաբանության ֆակուլտետի և մեր համալսարանի ուսանողներին ողջունեց ռեկտոր Գագիկ Գալստյանը: Նա ընդգծեց, որ նման ուսուցողական-ձանաչողական նախաձեռնությունները սերտ հարաբերություններ են ստեղծում տարբեր երկրների ուսանողների միջև և մաղթեց հաճելի ու բեղմնավոր աշխատանքային օրեր:

Իսկ աշխատանքային օրերը Կորնելիի և Տյոմենի համալսարանի ուսանողների մոտ սկսվել էին դեռ վաղուց: Չարենցավանի վերակազմավորված հաստոցաշինական գործարանն ուսանողներից ոմանք պատկերացրել էին՝ որպես գրադարան, հյուրանոց, ոմանք՝ սրճարան, փակ կամ տուրիստական քաղաք, բնամթերքի արտադրության տարածք, ոմանք էլ՝ էքստրիմ սպորտաձևերի մարզասրահ: Հատկանշական էր նաև Ալեքսանդր Մելդորֆի պատրաստած

Հայաստանի ու հայկական մշակույթի մասին ֆոտոպատումը, որը ներկայացնում էր մեր երկիրը՝ սկսած Ուրարտական ժամանակաշրջանից մինչև մեր օրեր:

Ամերիկյան Կորնելի, Տյումենի, Երևանի պետական և մեր համալսարանների ուսանողները, նախորդ օրերին, 6 խմբի բաժանված, աշխատում էին Չարենցավանի հաստոցաշինական գործարանի շրջակայքում՝ տեղում ծանոթանալով տարածքի հնարավորություններին:

Փետրվարի 21-ին ներկայացված 6 նախագծերն իրարից որքան էլ տարբեր, այնքան էլ նման էին՝ մեկ ընդհանուր գծով: Առեւտլի հզորության գործարանը, զոնե մասամբ, պետք է վերակառուցվի՝ կրկին որպես գործարան: Առաջարկների թվում էին նաև մշակութային համալիրները և հասարակական վայրերը: Ինչպես նշեց Քաղաքաշինության ամբիոնի վարիչ Զառա Մամյանը՝ նախագծերից լավագույններն անպայման կներկայացվեն գործարանի ղեկավարությանը. միգուցե կյանքի կոչվեն:

ԵՍ ԷՆ ԴԱՐՁԱ ԴՈՆՈՐ

Երբ կես սրվակ արյունը կարող է կյանք արժենալ:

ՃՇՀԱՀ-ի Ուսանողական խորհրդի և «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական կազմակերպության համագործակցության արդյունքում՝ այսօր մեր համալսարանում մի շարք ուսանողներ, դասախոսներ և աշխատակիցներ մասնակցեցին «Եղի՛ր դոնոր, փրկիր մեկ կյանք» նախաձեռնությանը:



Կազմակերպության բժիշկ Միհրան Նազարեթյանն ուսանողներին ներկայացրեց արյան դոնոր լինելու կարևորությունը, անհրաժեշտությունը և դոնորագրվելու պայմանները: Բժիշկը նշեց, որ հիվանդի և դոնորի միջև համատեղելիությունն էապես կախված է ժառանգական և էթնիկական բնորոշիչներից, ուստի ավելի արդյունավետ է հիվանդի համար համատեղելի դոնոր

փնտրել էթնիկական նույն ծագումնաբանություն ունեցող անձանց շրջանակներում: Ժառանգական անհամապատասխանությունների պատճառով այն հայ հիվանդները, որոնց բուժման համար ցուցված է միայն ոսկրածուծի փոխպատվաստումը, մահանում են՝ համապատասխան դոնոր չգտնելու պատճառով: Հետևաբար խիստ անհրաժեշտ և կարևոր է ունենալ հայ դոնորների ռեեստր, որը կփրկի լեյկեմեայով և արյան հիվանդություններով տառապող հայ հիվանդների կյանքը:

Գործունեության 20 տարիների ընթացքում՝ Ոսկրածուծի Դոնորների համաշխարհային ասոցիացիայի լիիրավ անդամ հանդիսացող Ոսկրածուծի Դոնորների Հայկական Ռեեստրի և բարեգութ դոնորների շնորհիվ, բազմաթիվ կյանքեր են փրկվել:

Փետրվարի 19-ին, արդեն որերորդ անգամ, մեր համալսարանականներն են միանում այդ մարդասիրական գործին. նրանցից յուրաքանչյուրն էլ նույն հավատով, որ աշխարհի որևէ անկյունում ինչ-որ մեկը հենց իր արյան կարիքն ունի:

Չհապաղեց ոչ-ոք: Առաջիններից էր Ուսանողական խորհրդի նախագահ Արմեն Հարությունյանը, այնուհետև, հաջորդաբար լրացված թերթիկներ, արյուն տալու համար պարզված ձեռքեր և հույսով լցված աչքեր. «Երանի համատեղելի լինեմ քաղցկեղով հիվանդներից գոնե մեկի հետ»:

ԲԻԶՆԵՍ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐԿԱԾ Է

Ստեղծագործ և ձկուն մտքով ուսանողներին համախմբել էր «InnoCENS բիզնես գաղափարների մրցույթի» վերաբերյալ տեղեկատվական հանդիպումը:

ՃՀՀԱՀ որակի ապահովման կենտրոնի ղեկավար Վարազդատ Հովհաննիսյանը և ԷԻԿ ամբիոնի ասիստենտ Հերմինե Սամվելյանն ուսանողներին ներկայացրեցին մրցույթի նպատակը, հայտագրվելու և մասնակցության պայմանները:

Մինչև մարտի վերջ 3 հոգանոց թիմերը պետք է ներկայացնեն իրենց բիզնես նախագծերը, որոնցից կընտրվեն լավագույն 10-ը: Ընտրված տասնյակի հետ արդեն լուրջ աշխատանք կտարվի՝ նախապատրաստելու իսպանական Վալենսիայում անցկացվելիք միջազգային մրցույթին:

Լավագույն տասնյակում ընդգրկվելու, ինչու ոչ, նաև Վալենսիայում հաղթելու համար ուսանողներից պահանջվում է, առաջին հերթին, կրեատիվ գաղափար՝ որևէ ապրանքի կամ ծառայության տեսքով և այդ գաղափարը լավագույն լույսի ներքո ներկայացնելու, համոզելու հիմնավոր փաստարկներ: Կարևոր նախապայման է նաև թիմում գոնե մեկ ուսանողի՝ անգլերեն լեզվի իմացությունը:

Գաղափարների մրցույթը սկսված է: Հավաքիր մտքերդ, ուժերդ, թիմդ և, միգուցե, սեպտեմբերին Վալենսիայում քո թիմը դառնա հաղթողը:



ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՈԱԶՄԱԲԱԶԱՆ՝ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԹԵՄԱ

Փետրվարի սկզբին Ֆրանսիայի Կլերմոն-Ֆերանի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցում էին գտնվում ՃՇՀԱՀ-ի ճարտարապետության տեսության, պատմա-ճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի վարիչի ժ/պ, դոցենտ Էմմա Հարությունյանը և նույն ամբիոնի ասիստենտ Արև Սամուելյանը:

Գործուղման նպատակը՝ «Մոռացված ժառանգություն: Ուղղակի ճարտարապետական ժառանգության տարածքի վերակառուցում և արդիականացում» թեմայով ուսանողական շաբաթին մասնակցությունն էր: Ուսանողների առջև դրված էր Կլերմոն-Ֆերանի՝ 19-րդ դարում ակտիվ գործունեություն ունեցած ռազմաբազայի՝ պատմաճարտարապետական տեսակետից արժեքավոր, սակայն ներկայումս դատարկ և լքված կառույցներին նոր գործառույթներ ու կյանք հաղորդելու խնդիրը:

Առաջադրանքի շրջանակներում Հայաստանի և Ֆրանսիայի ուսանողներից կազմված 4 խմբերն առաջարկներ ներկայացրեցին, որոնց արդյունքներն ամփոփվեցին ժյուրիի գնահատականներով: Արդյունքում մեկ աշխատանք շահեց «Գրան Պրի», մեկը՝ խրախուսական մրցանակ: Բոլոր մասնակից ուսանողները ստացան մասնակցության վկայագրեր:



ԻՏԱԼԻԱՅԻ ԴԻԶԱՅՆԻ ՕՐԵՐԸ ԿՆՇԵՆՔ ՆԱԵՎ ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Մարտի վերջին նշվում է Իտալիայի դիզայնի օրերը: Մենք նույնպես անմասն չենք մշակութային ահռելի ժառանգություն ունեցող երկրի կարևոր իրադարձությունից: Այդ օրերը մեր համալսարանում նույնպես նշանակալի դարձնելու համար՝ փետրվարի 27-ին հյուրընկալել էինք ՀՀ-ում Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Վինչենցո Դել Մոնակոյին:

Դեսպանն առաջին անգամ էր մեր համալսարանում: Տպավորված էր և շնորհակալ՝ թե՛ ընդունելության, թե՛ շրջապատող գեղեցկության, թե՛ թունդ, բայց անմահական համով կոնյակի համար:

Ներկայացնելով Իտալիայի դիզայնի օրերի հետ կապված միջոցառումները՝ դեսպանը նշեց, որ մարտի 20-23 նախատեսվում են մշակութային օրեր անցկացնել ինչպես մեզ մոտ, այնպես էլ՝ Թիֆլիսում: Այդ օրերին Իտալիայից մեր համալսարան կժամանեն իտալացի ճարտարապետներ, որոնք կներկայացնեն այս տարվա՝ «Խելացի քաղաք» խորագրով նախագծեր, և կխոսեն ժամանակակից իտալական ճարտարապետության և դիզայնի մասին: Քննարկվեց նաև մեր ուսանողների հետ վարպետության դասեր անցկացնելու հարցը, ինչին դեսպանը պատասխանեց՝ կարելի է, ինչու՝ ոչ:

Հանդիպման ավարտին՝ հեռախոսազրույց վարելով Վրաստանի իր գործընկերոջ հետ, դեսպան Մոնակոն հայտնեց, որ, ամենայն հավանականությամբ, Իտալիայի դիզայնի օրերը մեր համալսարանում կանցկացվեն մարտի 22-ին:



ԴԵՊԻ ԼՈՒԻ, ԴԵՊԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՄԵՆԱԽԵԼԱՑԻ՝ ՔՈԱՖ ԿԵՆՏՐՈՆ

Դեպի Լոուի միշտ, կարծես, թումանյանի կանչով ես ուղևորվում. Անուշին ու Սարոյին մի փոքր ավելի լավ ճանաչելու, թումանյանական քառյակների մասին մտորելու: Թեպետ այս օրերին ամբողջ աշխարհում պտտվում է #Թումանյան150-ը, բայց այս անգամ Ամենայն Հայոց բանաստեղծի բնօրրան գնալու նպատակն այլ էր:

Այլ էր, բայց թումանյանի «թույլտվությամբ»: Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Ճարտարապետության ֆակուլտետի դեկան Սարգիս Թովմասյանի, Դիզայն ֆակուլտետի դասախոս Տարոն Ալեքսանյանի, Շրջանավարտների ու Կարիերայի կենտրոնի ղեկավար Հայկ Սարգսյանի ուղեկցությամբ՝ մի խումբ ճարտարապետ ու դիզայներ ուսանողներ, շաբաթ առավոտյան բռնեցին դեպի Լոուի տանող ճանապարհը:

Մինչև նպատակակետի մասին խոսելը, նախ՝ առաջին կանգառի մասին: Թումանյանի տուն-թանգարանն էր. ասմունք, հիշողություններ, մի խոսքով, Թումանյանով օծված շարժվեցինք դեպի Դեբետ համայնքի ՔՈԱՖ Սմարթ կենտրոն:

ՔՈԱՖ Հայաստանի մանուկների հիմնադրամի առաջարկած ծրագրերն առնչվում են կրթությանը, տնտեսական զարգացմանը՝ ներառելով այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը, պատանիների ու մեծերի համար նախատեսված արհեստագործական ու մասնագիտական դասընթացները, սպորտն ու ֆիթնեսը, առողջապահությունը, երեխայի զարգացումն ու մեդիագրագիտությունը: Ծրագրերն ընդգրկում են հստակ կազմավորված ամենօրյա դասընթացներ, որոնք վերաբերում են գիտությանը, բլոկչեյնին, ռոբոտիկային, ծրագրավորմանն ու կոդավորմանը, անգլերեն լեզվին, թատրոնին, երաժշտությանն ու պարին, գյուղատնտեսությանը, արվեստին, վեբ դիզայնին ու գրաֆիկական դիզայնին, հավելվածների մշակմանը: Թեմաներ, որոնք կօգնեն աշակերտներին տեխնոլոգիայի բնագավառում կարիերա կառուցել:



Մեր համալսարանի ծանոթությունը ՔՈԱՖ-ի հետ կազմակերպել էր կենտրոնի գործընկերությունների և միջոցառումների կազմակերպման ղեկավար Իրինա Իգիթխանյանը: Նա նաև հոգացել էր հանրահայտ «Արդեան» ընկերության գործունեությանն ու արտադրանքին ծանոթանալու մասին: Համալսարանական խմբի հետ էր ընկերության ղեկավար, ամերիկահայ ճարտարապետ Վազգեն Բրուսյանը, ով պատմեց «Արդեան»-ի՝ հայկական զարդանախշերի և գրությունների համադրությամբ նորաոճ ու ինքնատիպ կիրառական իրերի ստեղծման գաղափարի ու նպատակի մասին:

Հոյակերտ և ճարտարապետական ինքնատիպ լուծումներով ՔՈԱՖ կենտրոնում երեխաներն իրենց լայն հետաքրքրություններն են բավարարում՝ սկսած 3 տարեկանից: Լոռու և Տավուշի մարզերի յոթ համայնքներում տեղակայված ՔՈԱՖ Սմարթ սենյակները երեխաներին ոչ միայն Սմարթ ծրագրերից օգտվելու հնարավորություն են տալիս, այլև՝ սահմանամերձ գյուղերի երեխաների համար ծառայում որպես ապաստարաններ, որոնք ապահովված են խմելու ջրի, էլեկտրաէներգիայի, լուսավորության ու օդափոխանակման հատուկ լուծումներով: Ինչպես իրենք են ասում՝ «Մեր տեսլականն է կառուցել էլ ավելի շատ Սմարթ կենտրոններ, որոնք կծառայեն Հայաստանի բոլոր գյուղերին»:



Այդ ծառայության մեջ մեր համալսարանն էլ անապայման կունենա իր մասնակցությունը: Յուրատիպ եռակողմ ծանոթություն և համագործակցության հեռանկար ծնվեց մեր համալսարանի, ՔՈԱՖ Սմարթ կենտրոնի և «Արդեան» ընկերության միջև: Փոխադարձ աշխատանքներով և ծավալած գործունեությամբ հիացած՝ կողմերը պայմանավորվեցին հաճախակի դարձնել փոխադարձ այցերը, վարպետության դասեր անցկացնել և կիսել փորձն ու գիտելիքները նոր սերնդի հետ:

ՓԱՅՆՈՒՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԹԲԻԼԻՍԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Մարտի 1-2-ը Թբիլիսիում անցկացված միջազգային «U-forum» համաժողովին մասնակցում էր նաև մեր համալսարանի Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի ասպիրանտ, Ճարտարապետ-քաղաքաշինարար Լիլիթ Բաբայանը:

Թբիլիսիի պետական համալսարանի և Վրաստանի քաղաքային ինստիտուտի կողմից կազմակերպված համաժողովը նվիրված էր քաղաքաշինական և հողօգտագործման ժամանակակից խնդիրներին և մասնակից երկրների փորձի փոխանակմանը: Մասնակից երկրների շարքում էին Հայաստանը, ԱՄՆ-ն, Նորվեգիան, Պորտուգալիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Մոլդովան, Ուկրաինան, Լեհաստանը, Ադրբեջանը:



Մեր ուսանողուհին համաժողովին ներկայացել էր «Տարածքների կազմակերպման կլաստերային կառուցվածքը՝ որպես ՀՀ հողային ռեսուրսների գնահատման, արդյունավետ օգտագործման և կայուն զարգացման գործիք» թեմայով: Մեզ հետ զրույցում Լիլիթը նշեց, որ իր աշխատանքն, արդիականության առումով, առանձնահատուկ ուշադրության է արժանացել, քանի որ ներառել է հետսովետական գրեթե բոլոր երկրներում առկա խնդրահարույց հարցերը:

Համաժողովի շրջանակներում ակտիվ քննարկումներ են անցկացվել մասնակիցների և Վրաստանի Ճարտարապետության և քաղաքաշինության ոլորտի առաջատար մասնագետների միջև: Կազմակերպվել է նաև էքսկուրսի՝ դեպի անմխիթար և վերափոխման ենթակա տարածքներ:

«ԿԱՀՈՒՅՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՍԵՄԻՆԱՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ

Մարտի 1-ից մեկ շաբաթ, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Ճարտարապետության ֆակուլտետում սեմինար էր՝ ուղղված ուսանողների մասնագիտական հմտություններն իրականում գործածելուն:

Սեմինարի թեման «Կահույքի նախագծում»-ն էր, որի հեղինակն ու համակարգողը ՃՀՀՀ Ճարտարապետության ֆակուլտետի փոխդեկան Արմեն Շատվորյանն էր: Դասընթացները վարելու նպատակով հրավիրված էին դիզայներ Դավիթ Ճգնավորյանը, Ճարտարապետներ Գարեգին Աղուզունցյանը և Արա Ավագյանը:



Գրանցված 38 ուսանողից սեմինարին մասնակցած 28-ն այսօր ներկայացրեցին խոհանոցային կահույքի իրենց նախագծերը և ստացան մասնակցության վկայականներ:

